«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» 2001 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-145 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի «դիտարկումների պետական ցանցի հենակետային օբյեկտներ» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«պետական ռեեստր՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվություն արտադրողների մասին տվյալների ամբողջություն։»։

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետով.

«դ) սահմանում է պետական ռեեստրի վարման կարգը»։

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» ենթակետով.

«ժե) պետական ռեեստրի վարումը»։

Հոդված 4 .Օրենքը լրացնել նոր 12.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 12.1 Տեղեկատվություն արտադրողների պետական հաշվառումը:

1. Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվություն արտադրողների պետական հաշվառումն իրականացվում է

հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվություն արտադրողների, ինչպես նաև նրանց կողմից կատարված աշխատանքների և մատուցած ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները, այլ զորքերը, որոնք արտադրում են հիդրոօդերևութաբանական տեղեկություններ, ենթակա չեն պետական գրանցման:»

Հոդված 5. Անցումային և եզրափակիչ դրույթներ:

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: